

թուփին յառաջ բերեց ունենդիրների մէջ. Գա-
սախօսութիւններեց յետոյ պատարներէ մէջ
գիտնական, կենդանի վիճաբանութիւններ էին
տեղի ունենում որպէս մաքերի փոխանակութեան
լաւագոյն շարժառիթ: Ժողովը երկու օր է տե-
ւել, և 12 պատարի մէջ 300 մ. նուէր է հա-
ւաքուել յօգուտ Աւստրիայում ցրուած բողո-
քական հաւատակիցներէ:

Ամերիկա.

— Հիւս. Ամերիկայի լուսեռականների ընդհ. խոր-
հույր: Այս եկեղեցին 9 զանազան ժողովներեց
է բաղկացած. բոլորի համախմբումը կոչուած է
ընդհանուր ժողով: Անցեալ հոկտեմբերին Չի-
կագոյում գումարուեցաւ այս լուծերական եկե-
ղեցու ընդհ. ժողովը նախագահութեամբ պատ-
ար Մոլդենհուկի: Այս եկեղեցին բաղկացած է
զանազան ազգութիւններից, իւրաքանչիւր ազգ-
իւր լեզուն է գործածում և իւր ժողովն (Synode)
ունի: Նա բաղկացած է 2029 համայնքներից
1233 պատարներով:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

Ս. Հայրապետի Սրբատառ Կոնդակից, որ
քաղաւածօրէն հրատարակում է տոյն համարի
սկզբում, մեր ընթերցողները կտեղեկանան
արդէն «Արարատ»-ի վերաբերութեամբ կատա-
րուած փոփոխութեան մասին, Հոգեւոր Տէրը
զինանելով Արժ. Տէր Կարապետ վարդապետի
թախանձանաց, հաճեցաւ ընդունել նորա
հրաժարականը «Արարատ»-ի խմբագրութիւ-
նից: Մ. Աթոռի ժառանգաւորաց Ճեմարա-
նի Տեսչութիւնը այնքան ծանր եւ քազմա-
զբաղ պաշտօն էր, որ Հ. Կարապետը ստի-
պուած էր հրաժարուել խմբագրութիւնից,
իւր ուժերը աւելի ազատ կերպով Ճեմարա-
նի քարոյական եւ ուսումնական զարգացման
նուիրելու համար:

Այս գործն այժմ Հոգեւոր Տիրոջ քարծր

հրամանով յանձնուած է մեր նուաստութեան:
Ընդունուած սովորութեան հարկը վճարելով՝
պարտք ենք համարում յայտնել, թէ խրմ-
քագրի փոփոխութիւնը առանձին Նշանակու-
թիւն չունի «Արարատ»-ի ուղղութեան վերա-
բերութեամբ: «Արարատ»-ը միայն մի
նշանակութեամբ է ծառայել: Եթէ պատահել
գիշերէր էլ միայն յետէն գիշերէր: Նա Հայոց
Հայրապետական Աթոռի պաշտօնական թեր-
թըն է, Ս. Էջմիածնի միաբանութեան քե-
րանը, Հայաստանեայց Եկեղեցու միակ կրօ-
նական-գիտնական թերթը, որի Տէրը Հայոց
Հայրապետն է: Ուրեմն ով եւ լինի նորա
խմբագիրը պէտք է աշխատէ քրիստոնէա-
կան-աւետարանական ծմարտութիւններ սեր-
մանել ժողովրդի մէջ եւ ամուր կապելով
միացնել Հայոց Հայրապետական Աթոռի հետ:
«Արարատ»-ը արձանագրելով օտար եկեղե-
ցիների յառաջադիմութիւնները խթան պէտք է
լինի հետեւելու նոցա կրօնական-յառաջադի-
մական լաւագոյն շարժմանց: Իսկ գիտնական
քաժնով: Տ. Նախարարի հաստատած ծրագրի
համաձայն՝ նուիրուած պէտք է լինի գլխա-
ւորապէս մեր եկեղեցական պատմութեան,
մատենագրութեան, հնախօսութեան կամ
արուեստի, եւ ընդհանրապէս եկեղեցական
քաղաքակրթութեան ուսումնասիրութեան:
Այս իմաստով էլ Ն. Սրբութեան Կոնդակը հրա-
հանգներ է տալիս մեր նուաստութեան գործը
դիրացնելու նպատակով: Ուրեմն փոխում է
խմբագրի անձնաւորութիւնը եւ ոչ «Արա-
րատ»-ը. կաւելացնենք նաեւ, որ այդ փոփո-
խութիւնը կատարում է ոչ յօգուտ թերթի:
Մեր սիրելի միաբանակիցը՝ Տ. Կարապետ
վարդապետ, եթէ քաւականաչափ ժամանակ
ունենար «Արարատ»-ը խմբագրելու, հաւատա-
ցած ենք, որ թերթի զարգացումը անընդհատ
յառաջադիմութեան մէջ կլինէր: Բայց օրը
միայն 24 ժամ ունի, որի կէսը մօտաւորապէս
հանգստեան եւ աննդեան պէտք է նուիրել:
Քարոյական պարտքը թելադրում է միգ խոս-
տովանել, որ եթէ այսօր «Արարատ»-ը կրօնա-
կան եւ գիտական տեսակէտով՝ որպէս երո-
պական ամուսկիր մեր ձեռքն է անցնում,
գլխաւորապէս պարտական ենք նախկին
խմբագրի անդու աշխատանաց:

Փառք կտանք Աստծուն, եթէ մեզ կարողութիւն եւ առողջութիւն պարգեւէր՝ թերթի հեղինակութիւնը այն քարճրութեան վերայ պահելու, որով մեր ձեռքն է անցնում: Ծանր աշխատանքներից մենք եւս ազատ չենք. բայց եթէ յանձն ենք առնում այսպիսի մի պատասխանատու պարտականութիւն, խոնարհուում ենք միայն Հոգեւոր Տիրոջ Հայրապետական հրամանի առաջ: Կյաջողութիւն մեզ արդարացնել Հոգեւոր Պետի յոյսերը, թէ ոչ՝ ասպազան ցոյց կտայ: Վստահանում ենք միայն յայտնել, որ մեր կողմից չի խնայուիլ ոչ մի աշխատանք եւ միջոց, ինչ որ թերթի հեղինակութեան եւ յառաջադիմութեան նպաստել կարող է:

Սակայն մի երկու փոքրիկ ցանկութիւն խմբագրութեան կողմից կկամենայինք յիշել մեր յարգելի ընթերցողներին եւ աշխատակիցներին: «Արարատ»-ը երկու նպատակի է ծառայում. մի կողմից Կաթողիկոսութեան պիտի լինի նա եւ միւս կողմից Կաթողիկոսութեան: Առաջին մասի մէջ կրօնական—քարոյազիտական, տարրական առողջապահական եւ գիւղատնտեսական յօդուածներով, մեր զաւառների կրօնական եկեղեցական եւ դպրոցական կեանքին վերաբերեալ թղթակցութիւններով, հանրամատչելի տիպար քարոզներով եւ ընդհանրապէս հետաքրքրական լուրերով, ընթերցանութեան նիւթ պիտի մատակարարէ քահանայական դասակարգին եւ միջակ ընթերցողներին: Այս բաժնի համար յատկապէս կխնդրէինք մեր հեռաւոր, ժողովրդի մէջ ապրող քարեկամների եւ աշխատակիցների աջակցութիւնը: «Արարատ»-ը կցանկայինք իւր հանրամատչելի յօդուածներով ոչ միայն քահանայից, այլ եւ Կաթողիկոսութեան ընդհանրապէս մենք սպասում ենք ծեմարանի նախկին սաների կողմից, որոնք երկար տարիներ Մայր Աթոռի շնորհն են վայելել. ուրեմն եւ քարոյական պարտականութիւն պիտի զգան իրենց գրական լումաներով նպաստել Մայր Աթոռի քարոյական հեղինակութեան եւ դատարարական գործին նորա թերթի միջոցաւ:

Բայց այդ աջակցութիւնն սպասում ենք մանաւանդ մեր Արժանապատիւ միաբանակիցներից, որոնք յաջորդութեան, գործակալութեան, վանահայրութեան կամ քարոզչութեան պաշտօնով շարունակ շփուում են ժողովրդի հետ եւ աւելի միջոց ունին նորա կրօնական եկեղեցական, քարոյական կեանքն ու թերութիւնները դիտելու եւ ուսումնասիրելու:

Կրօնական տեսակէտով իրքան թերութիւններ եւ առաւելութիւններ կան մեր ժողովրդի մէջ, որ պէտք է առանձին ուշադրութեան արժանանան: Բանի տեղերից զանգատներ են լուում անչափահաս ամուսնութիւնների, անտոխապաշտութիւնների, քարոյական կեանքի անկման երեւոյթների մասին, որ սրտացաւ քրիստոնեայ Հայի կողմից ուշադրութեան արժանանալով՝ չարեաց դէմ մարտել կարող էր մեր թերթի միջոցաւ: Հեռաւոր անկիւններում, գիւղական նոյն իսկ քաղաքների կեանքի մէջ պատահած կրօնական տեսակէտով նշանակութիւն ունեցող շատ երեւոյթների, զեղծումների մասին յաճախ կեղծոտում ուշ ենք լուում, կամ մինչեւ իսկ տգիտութեամբ ծածկում եւ չարիքը դարձեալ չարիք է մտում: Այսու հրաւէր ենք ուղղում Մայր Աթոռի հարազատներին, հայ վարժապետներին, քահանաներին եւ նոցա աջակցութիւնը խնդրում. յայտնաբերելու Կաթողիկոսութեան վերաբերեալ թերութիւնները, ինչպէս իրենց իրենց, այնպէս իրենց իրենց: Եւ ինչպէս իրենց իրենց, այնպէս իրենց իրենց:

Յարգելի քարեկամներ, մի կարծէք թէ կրօնական յօդուածներ գրել միայն աստուածաբանների քաժինն է, կրօնական տեսակէտով կարելի է քննել կեանքի ամեն մի երեւոյթ, ժողովրդի առօրեայ նիստ ու կաց, տուր եւ առ. . . եւ անա այսպիսի խնդիրների համար է, որ Ձեր աջակցութիւնն ենք խնդրում: «Արարատ»-ի էջերը բաց են իւրաքանչիւր սրտացաւ Հայի, մանաւանդ հայ քահանայի առաջ, որ կամենում է ժողովրդի եւ իւր կարգակիցների հոգեւոր եւ քարոյական կացութեան քարոյումն նպաստել, ինքնին հասկանալի է, որ մեր քահանաների եւ թղթակիցների գրուածները Մայր Աթոռի թերթի միջոցաւ լուում:

Բնական պէտք է լինին: Այս մասին առ այժմ այսքան մի որեւէ անգամ առիթ կունենանք ժողովրդական կեանքի վերաբերեալ ռուսմասսիրութեանց եւ թղթակցութեանց նիւթեր եւ հրահանգներ տալու:

Իսկ ինչ վերաբերում է գիտական քաժնին, կցանկայինք Մայր Աթոռի միաբաններին, եւ մշտական միւս աշխատակիցներից զատ՝ նաեւ դրսի քանասէրների մասնակցութիւնը տեսնել: Արդէն Մայր Աթոռի միաբան քանասէրների թիւը հետզհետէ քազմանում է, կարճ ժամանակից յետոյ յոյս ունինք, որ «Արարատ»-ը գիտական տեսակետից աւելի մեծ յառաջադիմութիւն ցոյց կտայ, քան մինչեւ այժմ: սակայն մեզ համար ցանկալի է, որքան կարելի է գիտական քազմական ուժեր հաւաքել «Արարատ»-ի շուրջը: Վեհափառ Հայրապետի հրամանով եւ տպարանական վարչութեան սիրալիր աջակցութեամբ մենք պատրաստ ենք միշտ իսկ աւելի քան թանկանալի լինելու զգացման: Թատկապէս յաւելուածի համար կցանկայինք ամբողջական ռուսմասսիրութիւններ ունենալ մի կամ մի երկու համարում տպագրելու համար: Հայրապետական սրբատառ Կոնդակը մեզ արտօնութիւն է տալիս՝ ի խըրախոյս հայ քանասէրների՝ զբոյղներով արտատպել եւ նրանց յանձնել մի տպագրական թերթից աւելի ծաւալ ունեցող այն յողուածները, որոնք գիտական արժէք կունենան: Մինչեւ այժմ՝ խուսափում էինք պատրաստելու մենք իսկ յողուածներ հրատարակել «Արարատ»-ում, քայց այսուհետեւ Հայրապետական Կոնդակի համաձայն սիրով կընդունինք այդպիսիները: Յանկալի էր մանաւանդ Ժ. Ժ. ԺԱ. դարու ձեռագիրների նկարագրութիւններ հնագրութեան եւ մանրանկարչութեան պատմութեան համար արժէք ունեցող պատկերներով, վանքերի նկարագրութիւններ, պատկերներով, յատակագծով եւ արձանագրութիւններով: գեղեցիկ խաչքարեր եւլն: Եթէ իրագործուին Հոգեւոր Տիրոջ այս քաղձանքներն, անշուշտ «Արարատ»-ի ծախսը սովորականից շատ աւելի կմեծանայ, քայց Ս. Վեհի ցանկութիւնն է «Արարատ»-ը ծովացնել քստ ամենայնի ա-

ռանց ի նկատի ունենալու նիւթական ծախսերի ամուսն: Մայր Աթոռի քանասէրներն: Սակայն մենք յոյս ունինք, որ Մայր Աթոռի հարազատները ամեն կերպով կաշխատեն տարածել «Արարատ»-ի քաժանորդագրութիւնը եւ դորանով մասամբ նպատուել նիւթական մեծ ծախսերի համար:

Վերջացնելով մեր թեթեւ նկատողութիւնները՝ նոր տարուայ շնորհաւորութիւնների հետ՝ սիրալիր ողջոյններ ենք ուղարկում բոլոր հեռաւոր աշխատակիցներին եւ յարգելի ընթերցողներին:

Գ. Վ. Յովսէփեան.

ՄԱՅՐ ԱԹՈՐ.

Հոգեւոր Տիրոջ կարգադրութեամբ կազանդի առթիւ անցեալ գեկտ. 31-ի երեկոյին վեհարանի ընդունելութեան դահլիճում հացկերոյթ արուեցաւ Ս. Էջմիածնի ամբողջ միաբանութեան: Աղգիւս Վեհ. Հայրապետը բարեհաճել էր պատուել նոյն հացկերոյթը իւր բարձր նախագահութեամբ: Առաջարկուեցան Վեհ. Հայրապետի Մ. Աթոռի միաբանութեան եւլն. կենաց բաժակներ և արտասանուեցան մի քանի ճառեր:

Թաջորդ օրը յունուարի 1-ին ամբողջ միաբանութիւնը ներկայացաւ Նորին Վեհափառութեան՝ նորա Ս. աջն առնելու և նոր տարի շնորհաւորելու համար: Միաբանութիւնից յետոյ նոյնպէս Գեորգ. Ծնմարանի ամբողջ ուսուցչական խումբը աշակերտաց հետ միասին պատիւ ունեցաւ ներկայանալու Ս. Վեհափառութեան ի շնորհաւորութիւնն. տարուայ:

Ծննդեան տօնը կատարուեց մեծ հանգիստաւորութեամբ. պատարագիչն էր տեղապահ Գեորգ. Արիստակէս արքեպիսկոպոս: Իսկ ջրօրհնեաց տօնի հանդիսադիրը Նորին Ս. Օծութիւն Վեհ. Հայրապետն էր: Նոյն օրը